

## ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ<sup>\*)</sup>

Այդ բոլոր միջոցները, թրքական խիկոր-իմաստունների կարծիքով՝ պէտք է զօրացնեն Թիւրքիան, վերակենդանացնեն նրան, դարձնեն մի զօրեղ ու միատարր իսլամ պետութիւն:

Երբ այս մօտաւոր նպատակին կը հասնեն, այն ժամանակ միայն կը սկսուի թրքական համիսլամութեան իսկական նպատակը՝ յարձակողական շարժումը: Կը միանան բոլոր իսլամ ցեղերը կամ՝ Վիճէլմ կայսրի խօսքով, «երկրագնաբի 300 միլիօն մահմեդականները» Պօլսի խալիֆի դայիսնի տակ և կը տիրապետեն արար-աշխարհին...

Մինչդեռ քայլ առ քայլ եռանգով աշխատում են հասնել մօտաւոր նպատակին, հեռաւորը ևս բոլորովին աչքից բաց չի թողնեում, նրա համար էլ համիսլամականները ունեն պատրաստի միջոցներ, գործելու որոշ եղանակ:

- Այդ միջոցները կարելի է վերածել հետեւեալ տեսակներին,  
1) Ընդհանուր յայտնի պրօպագանդ:  
2) Դիպլոմատիական հանապարհ:  
3) Գաղտնի պրօպագանդ:

Ընդհանուր յայտնի պրօպագանդ ասելով, մենք հասկանում ենք այն բոլոր միջոցները, որ պարզորոշ կերպով գործադրուում են, առանց «գաղտնի գործի կերպարանք տալու»:

Այս ասպարէզում զլխաւոր տեղը բռնում է ուխտագնացութիւնը: Ամբողջ մահմեդական աշխարհը կապուած է Մերկայի և Մեդինայի կամ Հեջազի սրբազն վայրերի հետ: Ամեն տարի տասնեակ հազարներով ուխտաւորներ են խուժում այնտեղ՝ եղիպատոսից, Թիւրքիայից, Աւղանստանից, Ռուսաստանի զանազան ծայրերից, Բոլղարիայից ևայլն: Ներկայ 1901 թուին միայն Ռուսաստանից զնացած ուխտաւորների կամ հաջիների թիւն էր 5,600 հոգի:

<sup>\*)</sup> «Մուրճ», № 9:

Ուռասաստանից, Բոլղարիայից և այլ տեղերից գնացողների ճանապարհը Պօլսի միջով է. նրանք պէտք է մտնեն Պօլս, տեսնեն Խալիֆի փառահեղ աթոռները, նրա ոյժը, հարստոթիւնը:

Ահա այստեղ վրայ են համնում համիսլամական քարոզները: Մեծ տակտով ու ճարպիկութիւնով օգտւում են օթօման ազգասէրները միամիտ ուխտաւորների ներկայութիւնից: Խակոյն նրանք մտնում են ուխտաւորների մէջ, զրգուում, վասում են սէր դէպի Խալիֆն ու Խոլամը և ատելութիւն դէպի իրանց գեավուր պետերը: Ուրբաթ օրերը, երբ Ելլիսովի մենակեացը յանդզնում է գուրս գալ իր երկաթէ պարատից և մտնել իր պարփակների մէջ շինուած մզկիթն ազօթելու—մի սովորական ծէս, որ կոչուում է Սէլյամլը—բոլոր ուխտաւորներին հրաւիրում, ատնում են Սէլյամլըքի:

Այդ համդէսը կատարուում է ահազին թիւ ծովային ու ցամքային ամեն տեսակի զօրքերին ներկայութեամբ, արևելեան ձոխ փառահեղութիւնով, որ սարսափելի կերպով ազգում է խալամների տղայական վառ երեակայութեան վրայ:

Հանդէսից յետոյ Զերքէց-Ահմէտ փաշան բերում է ուամիկ ուխտաւորներին կայսերական սղջոյնը և նուէրները. բաժանուում են փաղեր ու ձրի տամսեր մինչև Կարմիր Ծով՝ չունեար ներին:

Խալիֆի հետ կապելու նոյն միջոյները գործազրւում են թունիսի, Տրիպոլիսի, Աւղանսասանի, Եղիպտոսի և այլ տեղերի ուխտաւորներին կայսերական սղջոյնը և նուէրները. բաժանուում են փաղեր ու ձրի տամսեր մինչև Կարմիր Ծով՝ չունեար Պօլսի միջով չէ:

Պօլսում պակաս մնայածը լրացնում են Հեջազում, Մահմէդի գերեզմանի և այլ սրբազն տեղերի շուրջը: Սյատեղ օգնութնան է հասնում Մէքրայի Էմիրը, որ կրում է «altesse» արքայական տիազոսը: Կրօնն ու բննակալութիւնը միշտ ձեռքձեռքի են առաջ գնում: Սուլթանը ուղարկում է «սրբազն կարաւան», ըեռնաւորուած ահազին կայսերական նուէրներով «նորին արքայական բարձրութեան» (altesse) Մէքրայի Էմիրին, վերջինս էլ ոգեսրուած քարոզում է—Մարգարէի անունից—հարատակութիւն իսլամների ընդհանուր հրամանաւարին, մարգարէի խոկական փոխանորդ խալիֆին:

Պօլսից գնացող սրբազն կարաւանի հետ գնում են ճարտար քարոզիչներ, որ օգնում են Էմիրին իր համիսլամական քարոզութիւններում:

Ասում են որ այդ սրբազն տեղերում հաւաքւում է մի ահազին գանձ՝ բոլոր ուխտաւորների նուէրներից, որ ծառայե-

լու է իրը միջոց աղաղայ սրբազն պատերազմին, երբ կը պարզուի Սանջազը-Շերիֆը ընդգէմ անհաւատների:

Այս ձեր աշխարհյա պրօպագանդի մէջն ենք տեղաւորում և ֆէսի գործածութեան քարոզները թիւրքիայից գուրս, և ամեն տարի ձրի ուղարկուող բազմաթիւ Դուրաններն աշխարհի ամեն ծայրերը, և «Համիդիէ» անունով բացուող գպրոցներն ու մզկիթները և այն: Միմիայն 1899-ի Օգոստոս 9/21-ին լրացող սուլթանի 25-ամեայ յօրեկանի տոիթով առնուազը 2—300 մզկիթներ, զօրանոցներ, աղբիւրներ և մեղրեսէներ (գպրոց) բացուեցան «Համիդ» անունով սկսած կապի գաղթականութիւնից՝ մինչև Հնդկաստան, Կայիրէ և այն:

Այն, Պօլսի համիսլամականները գիտեն ճարպիկ կերպով օգտուել ամեն մի չչչին առիթից:

Պօլսի ու Հեծազի քարոզներով վառուած ուխտաւորները վերադառնում են իրանց երկրները և իրանք էլ վառում են իրանց տգէտ հայրենակիցների երեակայութիւնը խալիֆի հարատութիւնովը, ուժով ու փառքովը: Ամեն մի հաջի գառնում է մի տեսակ ուսմիկ պրօպագանդիստ համիսլամութեան գաղափարի: Եւ այսպէս՝ տարէց-տարի աւելի ու աւելի լայնացող շրջաններով առաջ է գնում համիսլամութեան պրօպագանդը:

Բէյրութից մինչչ Հեծազ շինուելիք երկաթուղու շառլատանական ձեռնարկութիւնը, որ երեխ երբէք չը պէտք է իրականանայ՝ ծառայեց ու ծառայում է թիւրք քաղաքագչտների ձեռքում համիսլամական պրօպագանդի մի նոր ու զօրեղ միջոց—գէթ ժամանակաւորապէս: Աշխարհի ամեն ծայրերում բացուած են ստորագրութիւններ այդ «սրբազն ձեռնարկութեան» համար: Հանգանակուում են բաւական պատկառելի գումարներ, որ գալիս, թափւում են Պօլս, սուլթանի անձնական նախագահութեան տակ գտնուող յանձնաժողովի ձեռքը: Իսկ երկաթուղին... կը շինուին մի քանի տասնեակ վերատեր և... կը թողնուի ամեն ինչ երեսի վրայ, մինչչ որ շինուածն էլ քայլապէտի: Հաւաքած դրամի մեծ մասը կը կլանեն «օթօման ազգասէրները», իսկ մնացածը կը ծախսուի սուլթանի միակ հոգակազմով՝ բանակի վրայ: Այս պէտք է լինի այդ գծի ամենահաւաքածական վախճանը:

\* \*

Ամբողջ աշխարհն արդէն ընդունում է որ թիւրք գարիչները շատ նուրբ դիպլոմատներ են: Եւ շատ էլ բնական է այդ: Նրանց երկիրն այնպիսի դրութիւն ունի, շրջապատուած է այնպիսի պայմաններով, որ նրա վարիչները պէտք է անպատճառ

«մէկ ձեռքում երկու ձմերուկ բռնող» ճարպիկ ու տաս և վեց երեսանի դիպլօմատներ լինեն: Զբաղմունքը, վիճակը, կեանքի անհրաժեշտութիւնն է դարձել թիւրքերին այդպիսի նուրբ դիպ-լոմատներ:

Բայց «նուրբ դիպլօմատ» լինել չի նշանակում միշտ յաղ-քական գործող լինել, ուղիղ ու անսխալ գործել, իրականա-ցնել իր գրած նպատակը: Այդպէս էլ լինում է թրքական դիպ-լոմատների հետ: Նրանք նրբօրէն ու խորամանկ ձեւրով գոր-ծում են. Նրանք միշտ լողում են Սցիլլայի և Քարիբդայի ա-րանքով... Բայց արդիւնքն ինչ պէտք է լինի. այդ արդէն պարզ է. մասնկութիւն և քայլայում: Մեռածը չի կենդանանայ երբեք:

Թրքական ճարպիկ դիպլօմատութիւնը գործ է գրւում և համիսլամութեան հեռաւոր նպատակները նախապատրաստելու համար: Յատուկ պատուիրակներն ու մշտական գեսպաններն անդադար աշխատում են ստեղծել կատարեալ համերաշխու-թիւն իսլամական բոլոր կառավարութիւնների մէջ, նրանց կապել Պօլսի հետ, ընդունել տալ իսլամիքի գերիշանութիւնը: Թէ որքան այդ կը յաջողուի նրանց այդ, ապագայի խնդիր է. միայն մի բան ակների է որ Պարսկաստանի, Աւղանստանի, Թունի-սի, Եգիպտոսի և Պօլսի վարչութիւնների մէջ տեղի են ունե-նում այդ մաքով անդադար սերտ յարաբերութիւններ ու զրա-գրութիւններ: Այդ բանը չեն ծածկում Պօլսում և կարիք էլ չու-նեն ծածկելու. գաշնակցութիւններ կնքելու ազատ են բոլոր պետութիւնները:

Շահի այցելութիւնը Պօլս՝ դիտում էր թուրք լրա-գրութեան կողմից իրը այդ իսլամ-համերաշխութեան ամենա-խոշոր քայլերից մէկը: «Շահը եկաւ մեր միջնորդի ոտքը», բա-ցատրում էին ամբոխին Պօլսի սարկական թերթերը, դիտելով այդ այցելութիւնը իրը սուլթանի գերիշանութեան ճանաչում:

Եգիպտական խօսքի մշտական այցելութիւններն անպայ-ման լինում են երկու իսլամ երկրների համերաշխ գործունէու-թեան նպատակով:

Թրքական դիպլօմատիան իսկապէս այնքան ճարպիկ գրտ-նուեց որ՝ երբ 1900-ի սկզբներում՝ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ վէճ ծագեց Թունիսի Հինտերլանդի տիրապետութեան մասին, թ. Դուռը կատարեալ բողոք բարձրացրեց, աշխատելով ապացուցանել որ այդ խալամ երկիրը և նրա բէյերն ընդու-նում են խալիքի գերիշանութիւնը, ուրեմն և Թիւրքիայի սեփականութիւն են: Բաւական ճարպիկ խաղերով Հինտերլան-

դի բէյերին ոտքի հանեցին եւրոպացիների գէմ։ Պօլիս եկան փառաւոր ստորագրութիւններ բէյերի կողմից, որոնցով ինըդրում էին իրանց պաշտպանել և յայտնաւմ էին իրանց խորին հպատակութիւնը խալիֆին։

Բայց այդ բոլորը մնաց «Ճայն բարրառոյ յանապատի», եւրոպացիք իրանց «Էշը քչեցին» և թ. Դրան բողոքը մնաց արհամարհուած։ Այդ է թողի վիճակը։

Հազար անգամ աւելի ծաղրելի էր Պօլսի վարիչների բռնած դիրքը գէպի բօքսէրները և չինական այլանդակութիւնները։ Սկզբներում թրքական լրագրերը, յատկապէս երլարզի օրգան Մալումարը, ուրախութեան ճիշեր արձակեցին, գովեցին ու փառարանեցին Մանջուրիայի մասնեղական և չինացի բօքսէրների ազգասիրական վարժունքը։ «այդպէս պէտք է վարուել ծակամուտ ու կեղեքող եւրոպացիների հետ»...

Այս մի տեսակ կոչ նկատուեց դեսպանների կողմից։ Կոչ, որ ուղղուած էր թրքական ոչպակաս զգուելի բօքսէրներին։ Քրդերին ու առնաւուաներին, բայիքոզուքներին ու թուլումբաչիներին—յարձակուել եւրոպացիների և տեղական քրիստոնեաների վրայ։ Չարիքն արժատում խեղդելու համար՝ դեսպանները միաձայն բողոքեցին թրքական մամուլի այդ այլանդակութեան դէմ։

Խակոյն «Փրօնստը» փոխուեց։ Երլարզի օրդաններն սկըսեցին առաջուան հակառակ երգեր երգել։ Նրանք յարձակուեցան բօքսէրների այլանդակութիւնների վրայ, առաջ բերին դիպումատի անձնաւորութեան սրբազնան անձեռնմխելիսրիւնը, համարեցին եւրոպացիներին իրը անհրաժեշտ հաղախակրող տարրեր յետամնաց երկրների համար և այլն։ Նոյն տեսակ «Փրօնստի» փոփոխութիւն եղաւ և մզկիթների մէջ, առաջ խիստ համականնք, յետոյ՝ ատելութիւն գէպի բօքսէրները—գէթ երեսանց։

Երլարզի պալատն էլ, մի հարուածով երկու նապաստակ վայր գլորել ուղելով՝ իսկոյն կազմակերպեց մի պատուիրակութիւն ամենախորագէտ իմամներից, տուեց նրանց չինարէնի մի թարգման և պատրաստուեց ուղարկել Մանջուրիա, խալիֆի կողմից՝ իր հաւատացեալներին։ Մի կողմից՝ սուլթանը սրանով ուղեց փարատել եւրոպացիների մէջ գէպի իր անձը մնացած կասկածները, միւս կողմից՝ ուղեց իր հետ կապել նոյն իսկ Ծայրագոյն Արևելքի մահմեղականներին... Այդ յանձնախումբը պէտք է գնար և խրախուսէր՝ խալիֆի կողմից՝ մանջուրական իսլամներին—յետ կանգնել ապօրինութեան ձանապարհից։

Բայց կազմ ու պատրաստ կօմիսական 4 ամիս շարունակ մնում  
էր Պօլսում, որովհետեւ... փող չը կար ճանապարհուելու համար:

Այս յայսահ պրոպագանդի և դիվլօմատիվական ակներն  
միջոցների կողքին բնթանում է և մի այլ ճանապարհ—գալունի  
պրոպագանդ, գաւառական գործունէութիւն այն դրացի քրիս-  
տոնեայ պետութիւնների գէմ, որմնց մէջ բնակւում են իս-  
լամներ:

Ամեն տարի յրւում են Պօլսից գէպի կովկաս, Խրիմ, Ան-  
դրելասպեան երկիր, Բոլղարիա, Ռուսանիա, Հերցեգ-Բօնիա,  
Յունաստան բազմաթիւ մօլաներ, սօֆթաներ, իմամներ,, իւ-  
լէմներ ու գերվիչներ: Նրանք տարածւում, մասնում են այդ  
բոլոր երկրների խալամական յետադէմ տարրերի մէջ, վառում,  
բորբսում են նրանց խալամ ֆանտիկութիւնը. խոստանում  
են նրանց Մահմէդի դրախտը բազմաթիւ հիւրիններով, եթէ  
միշտ վառ պահեն ատելութիւն իրանց սրտերում գէպի գեա-  
վուրները և կապուած մասն Պօլսի խալիքի հետ, պատ-  
րաստ նրա կոչին լսելու, նրա մի մատի շարժումով գաւելու  
իրանց օրինական պետութիւնը և միանալու «հաւատացեալնե-  
րի հրամանատարի» հետ, ջարդելու անհաւատաների լուծը, վե-  
րականգնելու Մահմէդի լայնարձակ տիրապետութիւնը...

Համբարձմական այս բարողներին յաջորդում է կանոնաւոր  
դաւադիր մարմինների կազմակերպութիւնը այդ բրիստոնեայ  
պետութիւնների մէջ: Այդ մարմինները մի-մի համբարձմական  
կօմիտեսներ են, որ յաճախ ունենում են իրանց արամագրու-  
թեան տակ բաւական խոչըր նիւթական միջոցներ, զէնքեր ու  
կամաւոր զինուորների որոշ թիւ:

Ասում են որ էրզրումում կամ Արաշկերտում, Սկօպում  
(Խւակուբ) կամ Պրիզրէնում այս օր կամ մի քանի ֆաշաներ,  
որ կրում են «հրամանատար պահ-ինչ գնդի»: Իսկ այդպիսի զըն-  
դեր Թիւրքիայում չը կան. նրանց բոլոր անդամները հպատակ-  
ներ են ուստական կամ բոլղարական պետութեան—նրանք այն-  
տեղ են ապրում, բայց արդէն գաղանի զինուորագրուել են  
համբարձմական գաղափարին: Եթէ խալիքը բարձրացնել տայ  
«Սանգաղը-Շերիքը», նրանք խկոյն պէտք է դարձնեն իրանց  
զէնքերը իրանց օրինական պետութեան դէմ, պէտք է դաւա-  
ճանեն նրան և անցնեն թիւրքիայի կողմը:

Ահա, ընթերցող, համբարձմականների գործադրած ամե-  
նապլիսաւոր միջոցները, նրանց տակախքան ու մեթօգները, գո-  
նէ այնքան, որքան մեզ ծանօթ են:

ինչպէս արդէն ասացինք, այդ բոլոր միջոցներով պէտք է զօրանայ Թիւրքիան, դառնայ մի միաձոյլ իսլամական անյաղ-թել պետութիւն, որի շուրջը պէտք է ժողովուն բոլոր հաւա-տացեալները:

Եւ պէտք է այն ժամանակ դուրս խուժեն իսլամները Թիւր-քիայից, ջարդեն, փշրեն Խուսիային, Բողզարիային, Սերբիային, Աւստրիային, Յունաստանին և այլն: Այս յարձակողական շարժ-ման ժամանակ համիսլամական բոլոր գաղտնի մարմիններն ու կօմիտէաները պէտք է զէնք առնեն իրանց բոլոր կամաւորնե-րով, անցնեն Օթօմանների կողմը և արագացնեն Մահիկի թա-գաւորութիւնը—մի իսլիֆութիւն, որի մի ծայրը պէտք է հանգչի իսպանիայում, միւսը՝ Զինաստանում, մէկը Հարաւային-Աֆրիկայում, չորրորդը՝ Կազան-Շահարում...

Ահա համիսլամականների իդէալը, նրանց գիրագոյն տեհն-չերը...

### III. ԳՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

**Տեսնենք այժմ,** թէ նրբան կենսունակ, նրբան ապագայ խոստացող վարդապետութիւն է համիսլամութիւնը: Քննութեան ենթարկենք նրան մի քանի խօսքով միայն:

Մարդկային հասարակութիւնների շարժման մէջ նկատ-ւում է երկու պարզորոշ գործողութիւն. կենարոնացում և ա-պակենարոնացում: Միանման տարրերը ձգտում են կենարոնա-նալ, համախմբուել, իսկ տարրեր տարրերը՝ բաժանուել, ապա-կենարոնանալ: Եթէ նմանութեան հիմքը շահերի, գոյութեան պայմանների մէջն է, միատեղութիւնը յարատեւում է, Նա աւե-լի ևս ամուսը ու անքայլայիլի է լինում, երբ շահերի նմանու-թեան հետ լինում է և լեզուի, սովորութիւնների ու նոյն իսկ կրօնի նմանութիւն: Իսկ եթէ նմանութեան հիմքը չեղաւ շահե-րի ընդհանրութիւնը, եթէ նա հիմնուած եղաւ լոկ ցեղային, լեզուական կամ կրօնամետափիզիկական կապերի վրայ—ա-ռանց գոյութեան դրական պայմանների նոյնութեան—այդ դե-սկ միութիւնը կամ համախմբումը կը մնայ միշտ թոյլ, թքով կպցրած և անպատճառ կը քայլայուի ուշ թէ շուտ:

Համիսլամութիւնը միակ վարդապետութիւնը կամ միակ քաղաքական ձգտումը չէ իր տեսակի մէջ: Միատեղել մի մար-մին կազմել են ձգտում բոլոր գերմանական, սլաւոնական, լա-տին, անգլօսաքսոն ցեղերը, Գերմանիան ձգտում է միացնել ձուլել իր հետ Հոլլանդիային, Դանիամարքին, Աւստրիային...

Հոկտեմբեր, 1901.

Այդ նպատակով անւում է մի շատ զօրեղ պրօպագանդ: Օրինակ՝ Վիեննայի պարլամենտական օբստրուկցիան, ժողովրդական անհամար ու յաճախ այլանդակութեան հասնող ցոյցերի մէջ վոլֆի և իր կուսակցութեան բալոր քայլերը, նրանց նոյն իսկ «*los von Rom»* («հեռու Հռոմից»—բաժանուել կաթոլիկութիւնից), «*zdd և hier»* («այստեղ» գերմանաերէն և չեխերէն) հարցերը և այլն՝ պանդերմանական ձգտումների նշաններն են:

Զգտում են գէթ բարոյապէս, իբր դաշնակիցներ, միանալ Ռուսիան, Սերբիան, բողդաները, չեխերը, Ղարաղաղը և այլն: Այստեղ էլ լինում է մի խոշոր պրօպագանդ:

Բայց թէ պանդերմանիզմի, թէ պանսլավիզմի և թէ այլ համանման երևյթների մէջ շարժումը ծնունդ է առնում փոքրից, նիւթական անհրաժեշտութեան, ժողովրդական խաւերի գրկից և յետոյ միայն անցնում է մտաւոր ոյժերի շարքերը, դառնում զուտ գաղափար: Վարում նա լինում է մութ ու անորոշ, իսկ վեր ու վեր բարձրանալով՝ իբր կեանքի անհրաժեշտութեան արդինք, նա հետզհետէ աւելի ու աւելի պարզում, զօրանում, մշակում ու ամբողջացած թէօրիայի բնաւորութիւն է ստանում և քարոզւում զօրեղ անհատների կողմից կամ գործադրութեան մտնում աստիճանաբար:

Իսկ այստեղ կենսական անհրաժեշտութիւնը կամ ժողովրդակի վարերը գոյութիւն չունեն: Համբալամութիւնը ծնուել ու արմատացել է լոկ մի քանի շահամոլ վարիչ շրջաններում, օտարների ազգեցութեան տակ—և այնուեղից ուզում է տարրանալ ամբոխի մէջ, դուրս գալ թիւրքիայի նեղ սահմաններից և վարակել ամբողջ իսլամ աշխարհը: Սա մի ձգտում է, չը հիմնուած ոչ մի դրական հիմքի վրայ—մի ուտօպիա, մի ցնորք, որին վիճակուած է, որքան էլ նա ժամանակաւոր ազդուրիւն գտնի, վիժուել, անհետ կորչել մարդկային պատմութեան էջերից:

Համանման միւս շարժումների մէջ—եթէ չը լինի նոյնիսկ նիւթականը՝ կայ գէթ մի լեզուական, ազգային, ցեղային հիմք, նմանութիւն: իսկ համբալամութեան մէջ գէթ այդ էլ չը կայ: Այստեղ կապող տարրը միայն կրօնն է: իսկ շահերը լեզուները, ազգութիւնները, սովորութիւններն ու ցեղերը յաճախ հակադիր ու իրար ջնջող են իսլամ ժողովուրդների մէջ: Ճիշտ է, նա զեռ բաւական զօրեղ ազգեցութիւն ունի ստոր զարգացման վրայ գտնուող իսլամ ցեղերի վրայ, բայց կրօնի վըխուրուն հողի վրայ չի կարելի ոչ մի հաստատուն շնչոք հիմնել մեր ներկայ նիւթապաշտ զարում, վաղուց արդէն հնացել է կրօնի կապօղ, հիմնական սկրունք լինելու գաղափարը:

Բայց, ընթերցող, մի վարկեան ենթագրենք որ սխալ են նորագոյն ընկերագիտութեան վերջին նիւթապաշտ թէօրիաները, ընդունենք որ կրօնը կարող է լինել մի սկզբունք, մի հասարակութեան համար կապող, միացնող մի յենակէտ. ենթագրենք որ Ֆիւսաէլ-Դը-Կուլանժը, Բախովինը և թէօրդներն իրաւունք ունեն—իսլամական կրօնը բաւական է մի հասարակութիւն կազմելու համար, Ընդունենք:

Այն ժամանակ առաջանում է մի հարց. կարող են անօթիները, նիւթականից զուրկ, անտեսապէս սարուկ իսլամները կազմել ոչ միայն մի անագին խալֆիատ, այլ գէթ մի փոքրիկ և ուժեղ պետութիւն... Այդ է էտան հարցը:

Տաճկաստանի ողբալի մնանկութիւնն ամենքին յայտնի է, Նրա ներքին ուղղակի հարկերը չափազանց ծանր ու քայլայիշ են հպատակների համար: Գտաւաների մեծամամնութիւնն արգէն գալարւում է պարբերական սովի ու համաճարակ աղքատութեան ճանկերի մէջ: Իսկ անուղղակի հարկերը, մանաւանդ նրսնց ամենաէական մասը—մաքսերը—ողորմելի ու չնչին: Ամեն տեսակ զրսից ներս եկող ապրանքից պետութեան վճարւում է արժէքի լոկ  $80/0$ -ը: Այս տեսակ չնչին մաքսը չի թողնում երբէք ներքին արդիւնագործութեան ճնել ու զարգանալ, Թուրքիան դառել է Եւրոպայի համար միայն մի հրապարակ, ուր կարելի է էժան հում նիւթ գնել և սուզ գնով ծախել փարբեկատներ:

Կողմնակի հարկերից մի քանիսն էլ չափազանց ձնչող ու քայլայող են, բայց նրանցից պետութեան գանձարանը ոչ մի օգուտ չունի: Նրանք փաղուց արդէն ընկած են օտարների ճանկը:

Մաքսային ինդիրներում պետութիւնն արդէն սարուկ է Եւրոպայի երկաթէ ձեռքերի մէջ: 1899-ին և 1900-ին փորձ արին բարձրացնել ներմուծուող ապրանքների մաքսը  $80/0$ -ից 14-ի կամ գոնէ  $110/0$ -ի. բայց բոլոր դեսպանները մի մարդու պէս սաքի ելան, ուտո դրին:  $2^{1/2}$  միլիարդ հրէշաւոր պարագը ժայռի պէս նստած է թիւրք պետութեան ամեն մի քարի վրայ: Աղը, խմիչքները, մետաքսը, ծխախոտը, ոչխարի հարկը, մաքսատները, փարոսները, ձկնորսութեան իրաւունքը, ծովափերը —ամեն եկամտի աղբիւր խլուած է տանտիրոջ ձեռքից: Նրանք բոլորն էլ ընկած են Եւրոպական դրամատէրերի ձեռքը: Իսկ դրամատէրերի ետևում կանգնած են զօրեղ բանակներ, նաւատորմիջներ, թնդանօթ... դրամատէրերի մի կոպէկն անդամ չի կարող կորչիւ: Եւ ծծնեմ, անվերջ ծծում են օտարները Թիւրքիայի բոլոր եկամուսները: Գիտակցօրէն պահում են զօրեղ պետութիւնները մեռնելու դատապարտուած Թիւրքիան տնտե-

սական քայլայման վիճակի մէջ, որպէսզի նա երբէք չը կարողանայ իր գլուխը բարձրացնել, ազատ շունչ քաշել, և միշտ մնայ խաղալիկ իրանց ձեռքում:

Թիւրք պետութիւնը մնում է աղքատ, մնանկութեան ճահճի մէջ, բաժան-բաժան լինելու, պարտքերի փոխարէն բզքտուելու վտանգի անդունդի ափին կանգնած: Նրա ժողովուրդը գալարում է տնտեսական քայլայման ու սովի ճանկերում: Ծառայողներին գէթ տարեկան երկու անգամ ոռնիկ տալու համար 9—12 վաշխառուական տոկոմներ է ստիպուած խոստանալ երլարզը, որ 200,000 ոսկի փոխ տուող գտնի, էլի չի գտնում...

Եւ գեռ այս տեսակ ողորմելի ու մուրացիկ պետութիւնը համարձակում է համիսլամական ոսկի երազներ տեսնել:

Ո՞չ բօշաների, մուրացիկների և մնանկների աղէտ ամրութ երբէք չի կարող ոյժ կազմել զօրեղ պետութիւն հիմնել, գրացիներին սպառնալ... Այդ ամրոխը դատապարտուած է տեղի տալու, կամաց-կամաց քայլայուելու և մեռնելու:

Համիսլամական վարդապետութիւնը գուցէ կարող լինէր գոյութիւն ունենալ Հարուն-ալ-Խաչիզների, Օմարների և Ալիների ժամանակ. նա մեր ետևումն է—անցեալում, և ոչ մեր օռջնում—ապագայում:

Բայց—«խեղդուողը ձեռքը նետում է փրփուրներին»: Քայլայում, մեռնում է թիւրքիան, հիւծում է իսլամական աշխարհը եւրոպական քաղաքակրթութեան առաջ, և մահամերձ իսլամը «ձեռքը նետում է փրփուրներին», յուսահատական ճիգեր է անում, նոյն իսկ անմիտ ու տղայական ցնորքներով է իրան օրորում...